ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՓՈՐՁԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԺԸ. ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԷՍԻՆ

ՎԱՀՐԱՄ ԲԱԼԱՅԵԱՆ
vahrambalayan@mail.ru

ԺԸ. դարի երկրորդ կէսին, Ռուսաստանի օգնութեամբ Հայաստանի ազատագրութեան հարցը դարձաւ հայկական դիւանագիտութեան առանցքը։ Ցայտնի է, որ դրա արդիւնքն էր նաեւ 1722-30ի Դաւիթ Բէկի, Մխիթար Սպարապետի, Աւան Հարիւրապետի եւ Եսայի Հասան-Ջալալեանի գլխաւորած ազատամարտը Սիւնիքում եւ Արցախում։

Վերոյիշեալ ժամանակահատուածում Այսրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցը ռուսական դիւանագիտութեան համար ունեցաւ յատուկ նշանակութիւն։ Ռուսական պետական շրջանակներում առաջ էին քաշւում դեռեւս Պետրոս Ա.ի օրօք կազմուած մերձկասպեան արշաւանքների ծրագրերի իրագործման նախագծերը, որտեղ նորից առաջնային դերակատարութիւն էր վերապահւում Արցախի մելիքներին։ Շուշիին տիրացած Իբրահիմ խանից հալածական մելիքների մօտ դեռեւս կենսունակ էր հիւսիսի մեծ հարեւանի օգնութեամբ երկրի փրկութեան ծրագիրը։ Արցախի մելիքները ճիգերի վերջին լարումով ի մի բերելով երկրամասի տնտեսական եւ ռազմական կարողութիւնները նորից լծուեցին հայկական պետականութեան վերակերտման գաղափարին։

1769 *Յունիսին Հերակլ Բ.ի կազմած եւ Ռուսաստան առաքած «Վրաստանին կից Երկրների Նկարագրութիւնից» գրութեան մէջ ասուած է.* «Խամսան մի երկիր է, որտեղ կան եօթ մելիքութիւններ։ Նրանք բոլորը քրիստոնեաներ են, դաւանանքով՝ հայեր, եւ սրանք եւս պարսից թագաւորի արքունիքին հարկատու են եղել։ Երբ քայքայուեց Պարսից թագաւորութիւնը, այնտեղի քոչուոր ցեղերից մէկի առաջնորդը, որ մահմեդական էր տոհմով՝ Ջոանշէր, հզօրացաւ եւ այս Խամսայի կենտրոնում կայ հնուց ի վեր ամուր բերդ, խաբէութեամբ գրաւեց այն։ Մի քանի անգամ մեր եւ այս Ջոանշէրի միջեւ տարակարծութիւններ եղան եւ զօրութեամբն Աստծու մեզանից եւ մեր զօրքերից պարտուեցին եւ աւերուեցին, ո՛չ այն քրիստոնեայ հայերը, ո՛չ, այլ միա՛յն այն Ջոանշէրները։ Այժմ այնպիսի պատճառներ ծագեցին, որ մեր եւ նրանց միջեւ խաղաղութիւն է տիրում։ Խամսան ունի մեծ ամրութիւն, շատ լեռներ՝ անտառապատ ու ժայռաշատ եւ դաշտեր ունի ջրառատ, յոյժ բերքատու։ Իր երկրում Ջոանշէրը կարող է հաւաքել երկու հազար հինգ հարիւր զինուոր, իսկ հայերը հանդէս կը գան չորս հազար հինգ հարիւր [զինուորով]։ Այս երկիրը գտնւում է [վրաց երկրի] հարաւ արեւելեան մասում եւ տիրում են սրանք մինչեւ Ղարաբաղի եւ Գանձակի սահմանները եւ գտնւում են Շիրվանի, Նախիջեւանի, Գանձակի ու Ղարաղաղի միջեւ։ Այս Խամսայի բնակիչները շատ քաջ են,

պատերազմող եւ խիզախ, եւ այս մելիքների միջեւ վրէժխնդրութեան եւ թշնամութեան ծագումը Ջոանշէրների ձեռքը գցեց այս հայերին»[1]։

Դէպի Այսրկովկաս կատարուելիք արշաւանքը ռուսական պետութիւնը մտադիր էր իրականացնելու նշանաւոր զօրավար Ալեքսանդր Սուվորովի հրամանատարութեամբ։ Սուվորովը ապագայ արշաւանքի յաջողութիւնը կապում էր Արցախի մելիքների եռանդուն գործունէութեան հետ։ Մելիքների եւ Սուվորովի կապը իրականացւում էր ազգային-ազատագրութեան մոսկովեան ռահվիրաներ՝ Յովսէփ Արղութեանի եւ Յովհաննէս Լազարեանի միջոցով։ 1780 *Յունուարի* 13*ին Սուվորովը իր մօտ է հրաւիրում Արղութեանին ու Լազարեանին եւ մանրամասն տեղեկութիւններ ստանում Արցախի մելիքների մասին։ Սուվորովը ակնկալում էր, որ Արցախի մելիքների օժանդակութեամբ կ՝ազատագրի ոչ միայն Հայոց Արեւելից նահանգները, այլ նաեւ՝ Երեւանը։* 1780*ին Սուվորովը Լազարեանից զեկուցագիր է ստանում Հայաստանի քաղաքական դրութեան մասին, որտեղ նշւում է, որ* «Հայաստանը ամայացած է, բնակչութեան մեծ մասը ստիպուած է բնակութիւն հաստատել տարբեր տեղերում, սակայն հայ մելիքները Ղարաբաղում դեռեւս պահպանում են իրենց անկախութիւնը եւ անհրաժեշտ դէպքում կարող են հանել իրենց զօրքերը, որպէսզի վերականգնեն հայկական պետութիւնը, միայն թէ անհրաժեշտ է Ռուսաստանի ռազմական եւ տնտեսական օգնութիւնը...»[2]։ *Սուվորովը ցանկութիւն է յայտնում ժամանել Ղարաբաղ եւ տեղում ծանօթանալ վիճակին։ Նա նոյնիսկ կազմում է Հայաստանի քարտէզը, որը ներառում էր գլխաւորապէս Ղարաբաղի մելիքութիւնները։ Ղարաբաղի մելիքները եւս մասնակից էին զարգացումներին։ Նրանք ուղղակի նամակներ էին յղում ռուսական կառավարութեանը, յայտնելով իրենց հպատակութիւնը եւ խնդրում օգնել ազատագրելու իրենց երկիրը։ Այդ նամակներում մելիք Բեգլարը եւ մելիք Հաթամը իրենց համարում էին* «Հայոց թագաւորաց ազնիւ զինուորաց մնացեալ ժառանգք»[3]։

Սուվորովը, որի մայրը ծագումով արցախցի էր, մեծ հռչակ ունէր Ղարաբաղի հայերի մէջ, եւ մելիքները ձգտում էին որ ռուսական գալիք արշաւանքը գլխաւորի մեծ զօրավարը։ «Խնդրում ենք,- *գրում են մելիքները,*- մինչեւ 10 հազար հետեւակ եւ գոհ կը լինենք, եթէ դա իրականացուի գեներալ պորուչիկ Սուվորովի գլխաւորութեամբ»[4]։

Սակայն շուտով Սուվորովին տեղափոխում են Կազան եւ նրան այլեւս չի վիճակւում զբաղուելու Այսրկովկասի հարցերով։ Ռուսական կառավարութեան յանձնարարութեամբ, այդ հարցով զբաղւում է Եկատերինա Բ. կայսրուհու մտերիմներից ու ամենավստահելի բարեկամներից մէկի՝ իշխան Գրիգորի Ա. Պոտիոմկինի ազգական՝ գեներալ պորուչիկ Պաւէլ Ս. Պոտիոմկինը։ Վերջինս, իր նախորդների նման, ակտիւ շփումներ ունեցաւ հայ երեւելի գործիչների, յատկապէս Արղութեանի եւ Լազարեանի հետ։ Պ. Պոտիոմկինը մանրամասն տեղեկութիւններ էր հաւաքում Այսրկովկասում ստեղծուած քաղաքական եւ տնտեսական կացութեան մասին։

ԺԸ. դարի 80*ականների սկզբին ռուսական արքունիքում նոր եռանդով սկսեցին քննարկել Հայաստանի ազատագրութեան հարցը։ Այդ ծրագրերում ամենասուր ուշադրութիւն էր դարձուել իրողական ոյժի՝ Արցախի մելիքների վրայ։* 1783 *Ապրիլի* 25*ին Գ. Պոտիոմկինին հասցէագրուած իր նամակում Էջմի-*

ածնի Ղուկաս կաթողիկոսը յիշեցնում էր, թէ «առանձնապէս ջանադիր են մելիքները, առաւել եւս Արցախի մելիքները՝ լինելով անկախ, ինքնիշխան, ունէին բաւական թուով զօրք...»[5]։ *Ռուսական արքունիքը փորձում էր Արցախի մելիքութիւնները ապագայ Հայաստանի քաղաքական հիմքը դարձնել, իսկ մելիքներից մէկին կարգել հայոց պետութեան թագաւոր։ Այդ առթիւ* 1783 *Ապրիլի* 6*ին Գ. Պոտիոմկինը հրահանգ է տալիս Պ. Պոտիոմկինին՝* «Շուշիի Իբրահիմ խանին պէտք է հեռացնել, որովհետեւ դրանից յետոյ Ղարաբաղը կը կազմի բացի Ռուսաստանից ոչ ոքից կախեալ հայկական նահանգ։ Դուք այդտեղ օգտագործէք ամէն ջանք, որպէսզի այս նոր նահանգը կազմակերպուի ժողովրդի համար առաւել նպատակայարմար ձեւով։ Դրանով հայկական այլ խոշոր նահանգներ եւս կը հետեւեն նրա օրինակին կամ մեծ քանակութեամբ կը գան Ղարաբաղ»[6]։

Զարգացնելով եւ կարեւորելով այս գաղափարը Գ. Պոտիոմկինը 1783 *Մայիսի* 19*ին Եկատերինա Բ.ին ուղղուած զեկուցագրում ասում է.* «Չունենալով դեռեւս ձերդ կայսերական մեծութեան հրամանը ես կարգադրութիւն եմ արել գեներալ պորուչիկ Պ. Պոտիոմկինին Շուշիի Իբրահիմ խանի մասին, որը կը մօտեցնի նրա հնազանդութիւնը։ Այստեղ հարկ է նախատեսել, յարմար առիթով նրա նահանգը, որը բաղկացած է հայ ժողովուրդից, տրուի ազգային կառավարման եւ դրանով իսկ վերականգնուի Ասիայում քրիստոնէական պետութիւն, ձեր գերագոյն կայսերական մեծութեան խոստումների համաձայն՝ տրուած իմ միջոցով հայ մելիքներին»[7]։

Դէպքերի յետագայ զարգացումը, ապացուցեց, որ ռուսական արքունիքը ըստ էութեան, ոչ մի նպատակ չունէր Խամսայի Մելիքութիւնների հիմքերի վրայ վերականգնել հայկական պետականութիւն։ Պարզապէս երկդիմի քաղաքականութեամբ փորձում էր ստանալ հայերի համակրանքն ու առանց պատերազմի իրեն ենթարկել Իբրահիմ խանին։

Ռուս բարձրաստիճան պաշտօնեաները լաւ էին հասկանում, որ առաջ քաշելով անկախ Ղարաբաղի գաղափարը, այդ ճանապարհով կը ստիպեն Իբրահիմին ընդունել իրենց հպատակութիւնը։ Իսկ հայերի հարցում, նրանք վստահ էին, որ սիրաշահելու միջոցով մշտապէս կը վայելեն նրանց համակրանքը։ Մի առիթով Եկատերինա Բ.ը ասել է. «...միայն զէնքի ուժով չէ, որ յաղթում են ժողովուրդներին... այլ պէտք է նուաճել նրանց վստահութիւնը... նուաճել սրտերը..., որի համար պէտք է ամէն կերպ սիրաշահել եւ մեր կողմը գրաւել ժողովուրդի լաւագոյն մարդկանց»[8]։

Հայոց ազատագրութեան ամենավճռական պահին Իբրահիմ խանը հերթական անգամ ցոյց է տալիս իր դիւանագիտական ճկունութիւնը եւ հպատակութիւն է յայտնում Ռուսաստանին։ Այդ առթիւ Գ. Պոտիոմկինը զեկոյց է ներկայացնում Եկատերինա Բ.ին, որտեղ հարցնում է, թէ յարմար չի՞ լինի արդեօք «այս անգամ շոյենք Իբրահիմին, որպէսզի անհրաժեշտութեան դէպքում նա մեր բռի մէջ լինի»[9]։

Եւ այդպէս էլ կատարւում է։

1783 *նոյն Մայիսի* 19*ին Գ. Պոտիոմկինը հրահանգ է տալիս Պ. Պոտիոմկինին.* «...Շուշիի Իբրահիմ խանի հնազանդութեան եւ հպատակութեան մասին նրա խնդրանքը աւելորդ են դարձնում նրա հեռացումը։ Ձերդ գերազանցութիւն, առանց իրականացնելու նախորդ հրահանգը նրա տապալման մասին,

հաղորդէք նրան միայն, որ հարկը, որը ռուսական թագուհին կը բարեհաճի յարգել, հաւատարմութիւնն է (*այսինքն ռուսերը բաւարարւում էին միայն նրա հպատակութեամբ - Վ.Բ.*): Եւ, այդպէս, եթէ նա աներեր կը մնայ դաշինքի մէջ եւ մշտապէս պատրաստ՝ կատարելու գերագոյն հրամանները, ապա այդպիսի պայմաններում կարող է յուսալ հպատակութեան մէջ ընդունումը»։ *Իսկ Արցախի հայերին սիրաշահելու համար հրահանգ է տալիս՝* «...աշխատէք փաղաքշել հայերին եւ ներարկել նրանց մէջ բարի կամեցողութիւն դէպի Ռուսաստանը, որպէսզի նրանց միշտ ջանադիր եւ պատրաստ ունենաք օգտագործելու այն ձեռնարկումների համար, որոնք հանգամանքներն ու մեր գործերի շահերը կը պահանջեն»[10]։ *Յարական արքունիքը նմանօրինակ յուսադրական խոստումներ էր տալիս ռուսահայ գործիչներին՝ Լազարեանին եւ Արղութեանին։*

Մինչդեռ իրականում Գ. Պոտիոմկինը արդէն սկսում է հովանաւորել Իբրահիմին եւ քայլեր է կատարում, որոնք յետին պլան էին մղում հայոց ազատագրութեան հարցը։ Այդ էլ այն դէպքում, երբ Իբրահիմի բանագնացները լորձնաշուրթն հաւատարմագրերով միաժամանակ թակում էին ռուսական, թուրքական եւ պարսկական արքունիքների դռները։ Թուրքական սուլթանին ուղղուած խնդրագրում Իբրահիմ խանն ասում է. «Ամենապայծառափայլ բարձրեալիդ զեկուցում եմ, որ պատուիրակն եմ դարձնում ինձ վսեմագոյն Դռան, որտեղ հենց հրեշտակներն են ապրում եւ նրանից են յորդում առատութիւններն անծայր, քան ծովը, ամբողջ իմ կեանքը, կարողութիւնը, հողերն ու ժողովուրդները ոտքի փոշին են մեր մեծ մարգարէի փոխանորդի։ Ողորմագութ տէր, ...քեզանից օգնութիւն եմ սպասում եւ եթէ զօրացնէք մեզ, ապա մեր օրէնքի թշնամիներին մենք գլխիվայր կը դնենք»[11]։ *Նոյն Իբրահիմ խանը միաժամանակ յայտնում էր Պ. Պոտիոմկինին, թէ ինքը վաղուց ի վեր ցանկութիւն է ունեցել դառնալու* «ամենամեծաշուք Ռուսական գահի եւ անսպառ առատաձեռնութեամբ գահակալող կայսրուհու հաւատարիմ ու հաճոյակատար ստրուկը»[12]։

Դիւանագիտական քայլերի հետ միաժամանակ Իբրահիմ խանը եռանդուն նախապատրաստւում է Ռուսաստանի հնարաւոր առաջխաղացումը կանխելու համար։ Այդ նպատակով նա հիմնում է Ասկերանի բերդը, միաժամանակ մելիքներից աշխատուժ պահանջում Շուշի բերդաքաղաքի պարիսպները անմատչելի դարձնելու համար։ Ջնայած ռուսական դիրքափոխութեան, Արցախի մելիքներն ու Գանձասարի կաթողիկոսը յամառօրէն փորձում են արժանանալ ռուսական արքունիքի բարեգութ վերաբերմունքին։ 1784*ին Ադամ եւ Աբով մելիքների ու Յովհաննէս կաթողիկոսի կողմից Պ. Պոտիոմկինին հասցէագրուած նամակում նշուած է.* «հրաման է ինքնակալութենէ պայծառափայլ տէրութենէ ձերմէ ելանել եւ ազատել զազգս մեր ի ձեռաց անօրինաց եւ զերկիրս մեր եւ զմեզ ի ներքոյ ինքնակալ տէրութեան ձերոյ նուաճել»[13]։

Սակայն, ռուսական արքունիքի քաղաքական վայրիվերումներն ու հակասական դիրքորոշումը ողբերգական է դառնում Արցախի հայութեան համար։

Որերորդ անգամ ռուսական օգնութեան խոստումներից խրախուսուած, Արցախի հայութիւնը ըմբոստանում է Իբրահիմ խանի դէմ։ Խանն էլ առերես հպատակութիւն յայտնելու ճանապարհով, նոյն ռուսական իշխանութիւننե-

րից իրեն ապահովագրած, դաժանօրէն ճնշում, կողոպտում է հայերին, քայքայում մելիքների ուժերը։

1787 *Յունուարին եւ Մարտին մելիք Մեջլումը եւ մելիք Ադամը նամակով դիմում են Գ. Պոտիոմկինին՝ խնդրելով ազատագրել Արցախը։ Գ. Պոտիոմկինը, երկիմաստ պատասխանելուց զատ, նրանց յստակ առաջարկում է տեղափոխուել Ռուսաստան, խոստանալով բարեկեցիկ կեանք*[14]։

1787*ին Իբրահիմ խանը ձերբակալում է Արցախի մելիքներին՝ Աբովին, Բախտամին, Մեջլումին եւ Գանձասարի Յովհաննէս կաթողիկոսին։ Շուշիի բանտում սպանուում են Յովհաննէս կաթողիկոսն ու մելիք Բախտամը, իսկ մելիք Աբովին եւ մելիք Մեջլումին յաջողուում է փախուստի դիմել։ Ի պատասխան այդ քայլերի Ռուսաստանի ներկայացուցիչ Ս. Բուրնաշեւը եւ վրաց Հերակլ թագաւորը որոշում են շարժուել դէպի Գանձակ եւ Արցախ։*

Արդուիթեանը Արցախի մելիքներին յորդորում է չյուսահատուել, շարունակել պայքարը՝ ակնկալելով Ռուսաստանի աջակցութիւնը։ 1788 *Յուլիսի* 30*ին նա մելիք Մեջլումին եւ մելիք Աբովին գրում է.* «... յամենայն կողմանց կռիւ է ընդդէմ Հագարացուց եւ Շուէթաց, չկարծեմ ի յայսմ միջոցի օգնութիւն ինչ լինի ձեզ աստի, եթէ կարէք այլ իմն դուռն գտանել եւ բախել, եւ կամ նորին արքայական մեծութեանն աղաչել՝ օգնել ձեզ, ըստ ժամանակին արարէք եւ զժամանկն մի անցուցանէք...»[15]։

Երբ 1787 *Օգոստոսին ռուս-վրացական միացեալ զօրքերը յայտնուում են Գանձակի մատոյցներում, Արցախի մելիքների մօտ հայրենիքը ազատագրելու նոր յոյս է առաջանում։ Սակայն, Գանձակի մատոյցներում* 1787 *Օգոստոսի* 17*ին, Բուրնաշեւը հրաման է ստանում վերադառնալու Ռուսաստան*[16]։

Գանձակի դռներից ռուս-վրացական զօրքերի ետ քաշուելուց յետոյ մելիք Մեջլումն ու մելիք Աբովը իրենց ընտանիքներով ժամանակաւոր ապաստան են գտնում Վրաստանում։

Այս դէպքերի մասին, 1789 *Փետրուարին Ղուկաս Կարնեցին գրել է.* «Այլ վասն Խամսայու մելիքացն ծանից ես, որ քան ինքն ի նոցանէ նուաճեալք էին ընդ ձեռամբ տաճկաց եւ ունայնացեալք յամենայնէ, մնացեալ էին Մելիք Ադամի որդի Մեճլումն եւ Մելիք Յովսէփի որդի Ապովն, որք սակաւ մի յիշխանութիւն էին, սակայն եւ նոքա յանցեալ տարին մինչ վրաց պետն գնաց ի Գեանջայ, յարեցան ի նա՝ ապստամբելով ի յԻբրահիմ խանէն եւ, ի դառնալ փութով Վրաց պետին վասն յառնելոյ Լեզկեաց ի սահմանս Վրացտանու, նոքա եւս քանէօք ընտանեօք իւրեանց դատարկ փախան ի Վրաց երկիրն եւ զրկեցան յամենայն կայից իւրեանց եւ ի բնակութեանց։ Եւ այժմ ընդ ձեռն բերիցեն, տեսցուք թէ որպէս լինիցի»[17]։

Արցախի մելիքները, յայտնուելով անագորոյն վիճակի մէջ եւ ականատես լինելով 1787-88*ի դէպքերի նմանօրինակ զարգացումներին, ապագայում պետականութեան վերականգնման հարցում սրբագրեցին իրենց դիրքորոշումները։ Եթէ նախկինում Արցախի մելիքները ակնկալում էին Ռուսաստանի օժանդակութիւնը՝ թօթափելու մահմեդականների լուծը եւ վերակերտելու հայոց պետականութիւնը, ապա այս անգամ՝ դարավերջին, նրանց մօտեցումները աւելի քան հանգրուանային տեսք ստացան։ Այսպէս.-*

1. *Ռուսաստանի օգնութեամբ թօթափել օտարի լուծը եւ վերականգնել հայոց պետականութիւնը։*

2. Առաջին գերխնդիրը չիրականանալու պարագայում ժամանակաւոր ապաստան ստանալ Վրաստանում։

3. Իբրահիմ խանի լուծը թօթափելուց յետոյ հնարաւոր է ընդունել նաեւ վրաց թագաւորի գերիշխանութիւնը։

4. Եթէ Ռուսաստանը այլեւս ի վիճակի չէ օգնելու արցախահայութեանը՝ տապալելու Իբրահիմ խանին, ապա Արցախի մելիքները ակնկալում են ցարական արքունիքից՝ ստանալ տարածքներ Դերբենդի շրջակայքում կամ Կասպից ծովի ափերին եւ ողջ ժողովրդի հետ տեղափոխուել նոր բնակավայրը։

Այս մօտեցումները նկատելի են ռուսական արքունիքին եւ Արղութեանին հասցէագրուած Արցախի մելիքների նամակներում[18]։

Յետագայ դէպքերը ցոյց տուեցին, որ Արցախի մելիքները եւ յատկապէս ժողովուրդը պատրաստ չէր հրաժարուելու դարերի ընթացքում պահած ու փայփայած պետականութեան բեկորներից եւ հայրենի եզերքից ու ապահով կեանքով ապրելու օտար ափերում։

***

1794ին Իրանում Աղա Մուհամմադ խանը իրեն շահ է հռչակում եւ յարձակւում Այսրկովկասի վրայ։ Աղա Մուհամմադ խանին առաւել շատ անհանգստացնում էին ռուսական կողմնորոշում ունեցող Արցախի մելիքները։ Այդ էր պատճառը, որ նա խոստացաւ մելիքներին՝ հաստատել իրենց իշխանութիւններում եւ տապալել Իբրահիմ խանին, եթէ նրանք ենթարկուեն պարսից շահին։ Սակայն Արցախի մելիքները վճռականօրէն մերժեցին։ Միայն շրջահայեացութիւն ցուցաբերեց Ջրաբերդի մելիք Մեջլումը՝ միանալով Աղա Մուհամմադ խանին՝ Իբրահիմ խանին տապալելու նպատակով։ Սակայն, կարճ ժամանակ ետք մելիք Մեջլումը մահանում է Գանձակում եւ այս ծրագիրը նոյնպէս կիսատ է մնում։

Չնայած Իբրահիմ խանի դէմ անհաւասար պայքարում մելիքների ուժերը հատուել էին, բայց պայքարը դադար չունեցաւ։

Վարանդայի մելիք Ջումշուդը եւ նրա քրոջ որդի Գիւլիստանի մելիք Ֆրէյդունը, 1797ին մեկնեցին Աստրախան՝ նպատակ ունենալով Արղութեանի միջնորդութեամբ հանդիպել Պաւէլ կայսրի հետ։ Միաժամանակ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը յատուկ ուղերձով դիմեց կայսրին՝ հովանաւորութեան տակ առնելու հայ ժողովրդին։ 1798 Փետրուարի 26ի կայսերական հրովարտակով իր նախորդների՝ Պետրոս Ա.ի, Եկատերինա Ա.ի եւ Եկատերինա Բ.ի նման հայոց կաթողիկոսին, հայ մելիքներին, իւզբաշիներին ու կառավարիչներին, ողջ հայ ժողովրդին եւ առանձնապէս Ռուսական Կայսրութեան սահմաններում բնակուող հայերին, Պաւէլ Ա.ը վերցնում է իր կայսերական պաշտպանութեան ներքոյ[19]։ Չնայած այդ հաւաստիացումներին, նա ըստ էութեան, հրաժարուել էր Այսրկովկասում հայկական դուստր պետութեան ստեղծման գաղափարից, նպատակ ունենալով բռնազաւթել երկրամասը։

Աստանդական դարձած մելիքները Աստրախանում երկար սպասելուց յետոյ 1799ին մեկնեցին Պետերբուրգ եւ Արղութեանի միջնորդութեամբ ներկայացրին կայսրին իրենց աղերսագրերը։

Պաւէլ կայսրը ընդունեց երկու մելիքներին՝ ռուսաց հպատակութեան տակ։ Մելիք Ֆրէյդունը ստացաւ Բորչալուի մի մասը, իսկ մելիք Ջումշուդը՝ Լոռին։ Գիւլիստանի մելիք Աբովը հաստատուեց Բոլնիսում։ Այս ճանապարհով

Ռուսաստանը պիտի կորցնէր արցախահայ պետութեան ստեղծման վերջին հնարաւորութիւնը։

Բարեբախտաբար արցախահայութիւնը տուրք չտուեց իր մելիքների ցանկութիւններին՝ տեղափոխուել նոր տիրոյթներ։ Ժողովուրդը ամուր կառչած իր հողին, շարունակեց պայքարը ազատութեան համար։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Valerian Makharadze, *Materiali Po Istorii Rusko-Gruzinskikh Otnosheniy Vtoroy Poloviny XVIII Veka,* (*Նիւթեր ԺԸ. դարի երկրորդ կէսի ռուս-վրացական յարաբերութիւնների պատմութիւնից*), *Հտր. 3, Մասն 1, Թբիլիսի, Թբիլիսիի Պետհամալսարանի Հրատ.*, 1988, *էջ* 358, *վրացերէն։*

[2] M. Nersisian, *A. Suvorov I Rusko-Armyanskie Otnosheniya V 1770-1780 Godakh*, (*Ա. Սուվորովը եւ ռուս-հայկական յարաբերութիւնները* 1770-1780*ականներին*), *Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ.*, 1981, *էջ* 50։

[3] *Կ. Ղահրամանեան, Հիւսիսային Արցախ. Գոյութեան Պայքար, Երեւան, «Մ. Վարանդեան» Հրատ.*, 1993, *էջ* 47։

[4] Nersisian, *էջ* 58։

[5] *Մեսրոպ Մաշտոցի Անուան Հին Ձեռագրերի Ինստիտուտ Մատենադարան* (*ՄՄ*), *Ձեռ.* 2803, *թ.* 315։

[6] O. P. Markova, *Rosiya, Zakavkaze I Mejdunarodniye Otnosheniya V XVIII Veke* (*Ռուսաստանը Անդրկովկասում եւ միջազգային յարաբերութիւնները ԺԸ. դարում*), *Մոսկուա, «Նաուկա» Հրատ.*, 1966, *էջ* 183։

[7] A. Yoannisian, *Rosiya I Armianskoye Osvoboditelnoye Dvijeniye V 80-ekh Godakh XVIII Stoletiye* (*Ռուսաստանը եւ հայ ազատագրական շարժումը ԺԸ. դարի* 80*ականներին*), *Երեւան, «Գիտելիք» Հրատ.*, 1990, *էջ* 238։

[8] Markova, *էջ* 183։

[9] *Գալուստ Գալոյեան, Ռուսաստանը եւ Անդրկովկասի Ժողովուրդները, Երեւան, Հայաստան Հրատ.*, 1978, *էջ* 131։

[10] Yoannisian, *էջ* 237։

[11] *Վ. Բ. Յարութիւնեան, Արցախ. Հիմնահարցի Ակունքները, Ստեփանակերտ, «Սոնա» Հրատ.*, 1998, *էջ* 12։

[12] *Բագրատ Ուլուբաբեան, Արցախի Պատմութիւնը (Սկզբից Մինչեւ Մեր Օրերը), Երեւան, «Մ. Վարանդեան» Հրատ.*, 1994, *էջ* 160։

[13] *Armyano-Ruskiye Otnosheniya V II Polovine XVIII Veka, Sbornik Dokumentov* (*Հայ-ռուսական յարաբերութիւնները ԺԸ. դարի երկրորդ կէսին. փաստաթղթերի ժողովածու*), *Հտր. 4, խմբ. Մ. Ներսիսեան, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ.*, 1990, *էջ* 225։

[14] P. Putkov, *Materiali Dlya Novoy Istori Kavkaza S 1722 Po 1803 Goda* (*Նիւթեր՝ Կովկասի նոր պատմութեան համար*, 1772-1803 *թթ.*), *պրակ 2, Սանկտ Պետերբուրգ, Կայսերական Գիտութիւնների Ակադեմիայի Հրատ.*, 1869, *էջ* 195։

[15] *ՄՄ*, *Ձեռ.* 2699, *թ.* 172*ա*։

[16] Yoannisian, *էջ* 188։

[17] *ՄՄ*, *Ձեռ.* 4501, *էջ* 1395։

[18] *Armyano-Ruskiye Otnosheniya*, *էջ* 397, 473-74։

[19] *Լէօ, Երկերի Ժողովածու, Երրորդ Հատոր, Գիրք Երկրորդ, Երեւան, Հայաստան Հրատ.*, 1973, *էջ* 409։

ATTEMPTS TO RESTORE STATEHOOD IN ARTSAKH IN THE SECOND HALF OF THE XVIIITH CENTURY

(Summary)

VAHRAM BALAYAN

The liberation wars headed by David Bek, Mekhitar Sparapet, Avan Harurapet and Yesayi Hasan Djalalian in Sunik and Artsakh between 1722 and 1730 reflected the belief among the local Armenians that these areas could be liberated with the support of Tsarist Russia.

In fact Russian plans of extending Russian borders over the Southern Caucasus were revived in the second half of the 18th century. In these Russian expansionist plans a primary role was reserved to the Armenian *Melik*s of Artsakh.

These *Melik*s, however, were militarily weaker than Ibrahim Khan, the ruler of Artsakh, who had his headquarters at Shushi.

The author argues that the Russians prioritized the control of the area over any plan to restore Armenian statehood. They encouraged the *Melik*s to rebel against Ibrahim Khan, who was forced to shift his loyalty to the Russians in 1787-88 and maintain his rulership, at the expense of the Armenian *Melik*s, some of whom were jailed while others fled to the Caucasus.

The author notes that it was a lost chance for restoring Armenian statehood in the region.